

2012թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի օտարման գործարքների քանակը, 2012թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել է 22.8%-ով, իսկ 2011թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 0.9%-ով: 2012թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 7444 առուվաճառքի գործարքների 56.9%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2012թ. երկրորդ կիսամյակում, 2012թ. առաջին կիսամյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 4.2%-ով, իսկ 2011թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել՝ 10.1%-ով:

2012թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	երկրորդ կիսամյակ 2011թ.	երկրորդ կիսամյակ 2012թ.	առաջին կիսամյակ 2012թ.
Կենտրոն	438200	418500	405300
Արաբկիր	339600	346200	336400
Քանաքեռ-Զեյթուն	263800	274700	263100
Նոր-Նորք	227400	237800	226800
Ավան	244800	246900	236200
Էրեբունի	233300	240700	234800
Շենգավիթ	228900	243800	232100
Դավթաշեն	256900	266200	257400
Աջափնյակ	225900	234500	224100
Մալաթիա-Սեբաստիա	224300	231500	222600
Նուբարաշեն	143900	142000	140100
Միջինը Երևանում	257000	262100	252600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2012թ. երկրորդ կիսամյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները, 2011թ. երկրորդ կիսամյակի համեմատ, աճել են 2.0%-ով, իսկ 2012թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 3.8%-ով:

2012թ. երկրորդ կիսամյակում մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 2436 բնակարաններ, որոնց քանակը, 2012թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել է 28.9%-ով, իսկ 2011թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 8.4%-ով:

2012թ. երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		երկրորդ կիսամյակ 2011թ.	երկրորդ կիսամյակ 2012թ.	առաջին կիսամյակ 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	122700	113400	109900
	Ապարան	52500	50700	48700
	Թալին	64600	61200	61200
Արարատ	Արտաշատ	96600	93300	91300
	Մասիս	110800	110700	107200

	Վեղի	94200	97600	96400
	Արարատ	78400	74200	72200
Արմավիր	Վաղարշապատ	140400	153200	150400
	Արմավիր	115000	118700	116500
	Մեծամոր	80400	86400	85700
Գեղարքունիք	Սևան	91300	99000	97000
	Գավառ	54000	54900	52400
	Մարտունի	95700	106800	103500
	Վարդենիս	34800	38900	33300
	Ճամբարակ	24700	23800	21400
Լոռի	Վանաձոր	86900	87100	84500
	Ստեփանավան	74700	74300	74300
	Սպիտակ	97300	99800	100000
	Ալավերդի	39300	52300	49900
	Տաշիր	47600	43600	41300
	Թումանյան	13000	11000	11300
	Շամլուղ	9200	8000	8100
	Ախթալա	21700	19700	19500
Կոտայք	Աբովյան	141500	153100	150500
	Նոր Հաճն	125200	128400	128000
	Բյուրեղավան	105100	107100	106900
	Եղվարդ	110700	109000	108300
	Հրազդան	59900	60500	58100
	Ծաղկաձոր	213800	292500	294100
	Չարենցավան	75400	84000	82900
Շիրակ	Գյումրի	104400	109000	105400
	Արթիկ	64300	64700	63900
	Մարալիկ	36600	37700	35600
Սյունիք	Գորիս	120600	115600	115100
	Կապան	96700	90200	88700
	Սիսիան	86600	85000	79200
	Մեղրի	72700	71600	66500
	Ագարակ	43300	43700	40100
	Քաջարան	76500	94200	97100
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	81300	88000	82700
	Եղեգնաձոր	113400	117900	118700
	Ջերմուկ	111100	105500	96500
Տավուշ	Դիլիջան	101400	106400	100600
	Իջևան	120000	115000	111200
	Բերդ	52000	53800	49200
	Նոյեմբերյան	42300	43500	40700
	Այրում	29800	26000	24500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները, 2011թ. երկրորդ կիսամյակի համեմատ, աճել են 3.9%-ով, իսկ 2012թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 2.6%-ով:

2012թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 2662 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևանում՝ 785, մարզերում միասին վերցրած՝ 1877: 2012թ. առաջին կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 15.3%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 22.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 12.5%-ով: 2012թ. առաջին կիսամյակում, 2011թ. երկրորդ

կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 6.1%-ով, ընդ որում, Երևան քաղաքում աճել է 9.5%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 11.3%-ով:

2012թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	երկրորդ կիսամյակ 2011թ.	երկրորդ կիսամյակ 2012թ.	առաջին կիսամյակ 2012թ.
Կենտրոն	458300	467100	460100
Արաբկիր	368600	373900	366500
Քանաքեռ Զեյթուն	274600	285100	276400
Նորք Մարաշ	296900	310800	302900
Ավան	251400	263800	253500
Էրեբունի	235800	231300	223300
Շենգավիթ	238900	248200	241200
Դավթաշեն	268000	266800	259600
Աջափնյակ	237300	241600	237000
Մալաթիա Սեբաստիա	231100	231200	222600
Նուբարաշեն	147600	145300	144600
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	273500	278600	271600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2012թ. երկրորդ կիսամյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. երկրորդ կիսամյակի համեմատ, աճել են 1.9%-ով, իսկ 2012թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 2.6%-ով:

2012թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		երկրորդ կիսամյակ 2011թ.	երկրորդ կիսամյակ 2012թ.	առաջին կիսամյակ 2011թ.
Արագածոտն	Աշտարակ	131300	134500	131000
	Ապարան	54800	55200	52100
	Թալին	67100	68600	69300
Արարատ	Արտաշատ	104500	98500	98900
	Մասիս	115400	112700	111400
	Վեդի	96300	100400	99900
	Արարատ	87000	87300	87600

Արմավիր	Վաղարշապատ	162100	152200	148000
	Արմավիր	117900	105500	101600
Գեղարքունիք	Սևան	94400	94200	91500
	Գավառ	52700	53400	48500
	Մարտունի	95500	93900	90600
	Վարդենիս	38900	35500	34000
	Ճամբարակ	27900	27000	26000
	Վանաձոր	97800	98200	95600
Լոռի	Ստեփանավան	77100	87800	87100
	Սպիտակ	105400	113500	111900
	Ալավերդի	38500	47300	44300
	Տաշիր	52000	50900	50600
	Թումանյան	13800	12000	12300
	Շամլուղ	11000	13200	13200
	Ախթալա	23700	29500	29400
	Արսլան	149300	154500	147700
Կոտայք	Նոր Հաճն	130900	129800	128500
	Բյուրեղավան	108200	120000	120000
	Եղվարդ	117800	115800	115000
	Հրազդան	65200	80000	77600
	Ծաղկաձոր	310700	305000	304100
	Չարենցավան	76400	82400	77900
	Գյումրի	118200	117500	116100
Շիրակ	Արթիկ	67500	61900	60500
	Մարալիկ	38800	49800	48000
	Գորիս	128800	127300	126900
Սյունիք	Կապան	101400	98300	97900
	Սիսիան	91100	90500	88200
	Մեղրի	75100	78400	74600
	Ագարակ	45800	46300	46000
	Դաստակերտ	10400	11600	11600
	Վայք	83200	87400	82200
Վայոց Ձոր	Եղեգնաձոր	118200	114100	110500
	Ջերմուկ	119200	123600	119300
	Դիլիջան	106800	109100	104000
Տավուշ	Իջևան	130700	121700	119900
	Բերդ	55600	58400	57800
	Նոյեմբերյան	45600	46100	45900
	Այրում	33000	34500	34400

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 1.0%-ով, իսկ 2012թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 2.1%-ով:

Ընդհանուր առմամբ, 2012թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում օտարվել են 8641 միավոր /5219.72 հա/ հողեր, որից Երևանում՝ 720 միավոր /140.60 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 4489 միավոր /4746.57 հա/, որից Երևանում՝ 39 միավոր /5.91 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 2888 միավոր /253.35 հա/, որից Երևանում՝ 421 միավոր /32.91 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 1088 միավոր /140.14 հա/, որից Երևանում՝ 253 միավոր /100.47 հա/,

- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 82 միավոր /30.88 հա/, որից Երևանում՝ 7 միավոր /1.32 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 62 միավոր /22.29 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 31 միավոր /3.18 հա/:

2012թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում օտարված հողերից 7363 միավորի /4710.73 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 516 միավոր /123.50 հա/, նվիրատվության գործարքներ՝ 1209 միավոր /498.12 հա/, որից Երևանում՝ 198 միավոր /16.83 հա/ և փոխանակության գործարքներ՝ 69 միավոր /10.88 հա/, որից Երևանում՝ 6 միավոր /0.28 հա/:

Հանրապետությունում 2012թ. երկրորդ կիսամյակում, 2011թ. երկրորդ կիսամյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 1.3%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը աճել է 4.8%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 0.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 5.3%-ով: Հողերի 1152.66 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 24.4%-ը կամ 1796 գործարքներ /755.43 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 139 միավոր /19.99 հա/, իսկ 74.8%-ը կամ 5509 միավորը /3822.41 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 372 միավոր /102.79 հա/:

2012թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 58 գործարք /132.88 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2012թ. երկրորդ կիսամյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					Բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						Բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	0	0.00	1	0.01	35	3.79	103	16.20	23	2.31	6	1.31	234	19.41	109	79.76
Արագածոտն	131	89.31	1	0.02	8	0.27	26	3.36	433	1063.35	1	0.14	163	17.60	12	0.42
Արարատ	67	99.62	7	0.44	84	7.16	77	1.59	491	342.65	2	2.74	287	24.36	30	1.97
Արմավիր	46	68.01	6	1.18	9	0.94	49	0.75	512	973.02	2	2.37	350	36.01	17	0.29
Գեղարքունիք	11	3.43	4	1.06	73	6.53	73	5.78	833	313.52	2	1.98	78	9.37	8	0.38
Լոռի	16	5.09	5	0.79	38	0.64	64	2.38	122	85.80	0	0.00	72	6.85	21	0.35
Կոտայք	139	215.51	7	4.84	179	11.24	122	3.78	502	391.03	4	0.73	461	36.89	62	3.17
Շիրակ	7	4.62	8	1.81	33	0.74	53	1.65	169	163.76	1	1.00	54	4.62	16	1.18
Սյունիք	19	138.43	6	8.37	13	1.05	23	1.36	112	130.79	2	0.27	25	2.60	7	0.42
Վայոց Ձոր	20	12.77	3	0.18	29	1.89	36	0.72	67	43.23	0	0.00	32	2.93	16	0.30
Տավուշ	22	11.24	9	0.99	35	5.71	41	2.32	64	38.25	1	0.20	70	7.14	10	1.01
Ընդամենը	478	648.03	57	19.69	536	39.96	667	39.89	3328	3547.71	21	10.74	1826	167.78	308	89.25

Ստորև ներկայացվում է 2012թ. երկրորդ կիսամյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ /տնամերձ/ հողերի		հասարակ կան կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակ կան կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	64	11.21	1	0.01	18	2.66	45	8.54	75	8.78	0	0.00	0	0.00	17	1.12	58	7.65
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	100	59.52	65	55.87	1	0.02	8	0.27	26	3.36
Արարատ	3	0.02	0	0.00	1	0.01	2	0.01	227	107.77	62	98.61	7	0.44	83	7.15	75	1.57
Արմավիր	23	0.49	2	0.06	4	0.24	17	0.19	79	41.13	38	38.75	4	1.12	5	0.70	32	0.56
Գեղարքունիք	12	0.56	2	0.38	6	0.15	4	0.03	149	16.26	11	3.43	2	0.69	67	6.39	69	5.75
Լոռի	28	0.84	2	0.42	8	0.10	18	0.32	95	8.06	16	5.09	3	0.37	30	0.54	46	2.06
Կոտայք	25	4.76	1	3.66	13	0.87	11	0.23	412	222.19	129	207.09	6	1.18	166	10.37	111	3.55
Շիրակ	42	1.00	0	0.00	11	0.21	31	0.79	57	7.57	5	4.39	8	1.81	22	0.52	22	0.85
Սյունիք	17	9.15	6	8.37	5	0.29	6	0.49	40	136.03	15	134.40	0	0.00	8	0.76	17	0.87
Վայոց Ձոր	9	0.09	0	0.00	1	0.01	8	0.08	78	15.40	19	12.70	3	0.18	28	1.88	28	0.64
Տավուշ	2	0.12	0	0.00	1	0.07	1	0.05	105	20.13	22	11.24	9	0.99	34	5.63	40	2.27
Ընդամենը	225	28.24	14	12.90	68	4.61	143	10.73	1417	642.84	382	571.57	43	6.80	468	35.33	524	29.13

Հանրապետությունում 2012թ. երկրորդ կիսամյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 96 գործարքներ /76.45 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2012թ. երկրորդ կիսամյակում, 2011թ. երկրորդ կիսամյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 6.6%-ով: Ընդ որում, Երևանում աճել է 11.9%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 7.4%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 9.9%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 5.3%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 12.2%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 4.4%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. երկրորդ կիսամյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մասնավոր	Միջին			Նվազագույն	Մասնավոր	Միջին

Արագածոտնի մարզ										
Աշտարակ	48	31.17	60.0	1100.3	332.8	226	161.02	365.0	12000.0	3760.2
Ապարան	3	0.30	1218.2	2730.0	1854.0	23	11.17	86.5	2727.3	707.7
Թալին	14	24.40	38.1	48.5	40.8	134	814.93	93.6	5494.5	620.7
Ծաղկահովիտ						37	66.17	79.5	1000.0	251.3
Արարատի մարզ										
Արտաշատ	13	5.94	73.7	4272.7	1532.0	223	92.36	335.1	10833.3	2768.3
Մասիս	27	35.29	63.4	2997.5	379.6	120	97.36	200.0	11904.8	3122.9
Վեդի	22	57.39	16.2	1371.4	330.9	138	116.15	207.0	10795.1	1877.2
Արմավիրի մարզ										
Արմավիր	15	18.95	57.5	1059.3	427.2	294	333.49	294.3	9090.0	1514.8
Բաղրամյան	4	4.73	70.3	70.9	70.6	58	458.09	90.6	2561.1	755.9
Վաղարշապատ	19	15.07	39.6	1247.1	384.3	156	178.88	444.4	11764.7	2554.6
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	0.15	121.9	121.9	121.9	775	242.17	199.8	1875.0	406.0
Ճամբարակ	1	0.05	1526.0	1526.0	1526.0	19	19.22	60.5	953.3	341.3
Մարտունի	7	2.63	117.7	610.4	365.4	6	2.25	51.1	2850.0	733.4
Սևան	2	0.60	1221.0	1221.0	1221.0	6	3.41	52.2	2134.8	318.0
Վարդենիս						27	46.46	41.2	2575.1	394.9
Լոռու մարզ										
Ալավերդի	4	0.44	187.0	1095.7	727.6	19	8.08	170.4	6424.2	636.6
Գուգարք	4	0.72	212.2	1439.2	688.5	14	3.36	234.6	6065.9	751.3
Սպիտակ	5	1.42	162.8	6441.1	1863.6	13	2.10	250.0	5555.5	730.9
Ստեփանավան	3	2.51	483.0	1119.3	782.9	45	42.23	90.6	1686.6	302.7
Տաշիր						24	22.81	45.3	1384.4	146.9
Կոտայքի մարզ										
Աբովյան	66	102.01	35.9	8423.8	696.7	176	111.79	279.3	11942.7	4603.7
Եղվարդ	40	73.79	71.6	4721.8	783.3	221	231.21	174.4	11971.8	2701.2
Հրազդան	23	31.29	104.9	1000.0	356.6	102	45.95	130.5	10256.4	1810.7
Շիրակի մարզ										
Ախուրյան	3	1.99	120.8	295.3	199.1	52	37.20	252.0	1693.1	599.0
Ամասիա						7	18.37	40.9	261.0	128.5
Անի						72	72.70	110.6	546.9	370.7
Աշոցք						8	5.17	58.5	215.8	125.3
Արթիկ	2	2.40	140.3	6072.0	3106.1	25	25.96	79.4	1428.6	388.9
Սյունիքի մարզ										
Գորիս	4	7.98	59.4	1550.0	417.3	33	43.29	92.6	1023.2	704.3
Կապան	9	125.14	38.5	924.7	300.5	8	3.77	120.0	841.6	348.7
Մեղրի	2	1.28	242.2	472.2	357.4	5	1.39	193.0	3000.0	725.5
Սիսիան						64	78.73	46.3	1977.4	519.7
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	10	3.47	44.6	1600.0	386.4	40	33.72	125.0	10000.0	1883.3
Վայք	9	9.23	68.9	8505.0	3110.2	25	9.22	58.8	1430.7	616.4
Տավուշի մարզ										
Բերդ	1	0.03	500.0	500.0	500.0	16	3.21	213.3	3783.8	675.3
Իջևան	17	10.15	80.1	3960.0	1296.1	13	11.55	267.5	9454.5	1235.5
Նոյեմբերյան	4	1.06	718.0	2684.4	1641.8	35	23.49	46.7	7368.4	852.1

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. երկրորդ կիսամյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Եկագ գում	Առավելագույն	Միջին			Եկագ գում	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	4	914.0	922.0	3547.7	2640.6	134	132164.6	130.7	22200.0	2573.3
Ապարան	4	1816.0	378.4	558.3	468.4	16	24370.0	124.1	609.6	384.6
Թային						5	8194.0	63.2	1454.8	152.4
Ծաղկահովիտ						3	6370.0	60.0	214.3	87.0
Արարատի մարզ										
Արտաշատ	24	22954.9	97.6	5588.9	715.3	83	76734.0	173.9	7140.3	893.7
Մասիս	53	42905.5	118.0	3265.5	1128.0	144	101190.8	187.5	25000.0	1206.7
Վեդի	6	5598.7	158.2	1867.0	983.0	58	63849.5	126.1	5000.0	660.7
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	842.0	356.3	356.3	356.3	136	147839.6	131.6	9090.9	1215.1
Բաղրամյան	2	2137.0	148.3	154.2	151.3	9	11210.0	100.0	833.3	238.3
Վաղարշապատ	2	4000.0	57.5	114.9	86.2	201	193818.7	197.4	26528.4	1526.3
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	12	12712.0	114.1	258.6	163.6	15	14102.3	186.6	1084.3	665.9
Ճամբարակ	1	80.0	250.0	250.0	250.0	5	7222.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	36	41497.4	219.8	244.2	220.3	43	52079.8	119.3	5000.0	279.5
Սևան	7	6150.4	205.2	1472.1	507.4	6	5699.0	240.0	3110.4	307.8
Վարդենիս	11	3433.8	67.5	1150.0	601.7	8	14197.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի	4	241.0	605.0	1650.0	1127.5	8	8956.0	114.3	1388.9	216.3
Գուգարք	16	1684.2	262.2	4976.4	2482.9	38	28714.9	77.9	14083.3	1125.9
Սպիտակ	2	2806.5	244.7	245.2	245.0	19	23781.7	104.9	1348.3	205.3
Ստեփանավան	1	370.0	554.4	554.4	554.4	4	4990.0	88.2	1666.7	175.5
Տաշիր	7	333.0	324.6	722.0	475.4	3	2070.0	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	99	52939.1	410.0	5648.9	3136.6	233	168443.5	264.5	35353.5	1969.1
Եղվարդ	63	48787.9	229.2	3981.1	2229.4	178	152885.7	173.6	27000.0	2852.5
Հրազդան	4	1990.0	1267.5	3131.3	1700.3	48	46197.4	117.7	34848.5	1320.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	10	3507.9	262.6	4400.0	1985.5	29	19520.5	113.6	18750.0	332.0
Ամասիա						1	1450.0	45.3	274.7	71.0
Անի	2	800.0	402.1	467.4	434.8	12	15377.2	67.9	180.6	161.1
Աշոցք								40.8	144.0	63.2
Արթիկ	10	934.0	253.0	5750.0	2865.4	12	9831.6	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս	1	318.0	2200.0	2200.0	2200.0	10	13723.6	112.2	1700.0	367.7
Կապան	4	4987.0	110.4	1787.1	698.5	2	2344.8	67.9	2638.9	300.0
Մեղրի	3	2278.3	269.4	670.5	406.3	5	4546.0	68.5	632.9	199.1
Սիսիան						7	4737.3	123.5	875.0	199.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	7	2660.7	750.0	1492.5	940.8	24	21876.0	96.7	7659.6	500.4
Վայք	21	16154.3	244.8	1290.5	854.7	7	6560.9	120.7	1448.3	203.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	790.0	75.8	810.0	111.3
Իջևան	31	56221.3	160.0	4800.0	2423.9	62	62162.6	74.1	14423.1	516.5
Նոյեմբերյան	3	111.6	1650.2	1656.0	1652.0	6	5611.0	125.0	1948.1	222.8

2012թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4771 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.1%-ը:

2012թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը, 2012թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել է 17.4%-ով, իսկ 2011թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 19.4%-ով:

2012թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 272 բնակարանների, 519 անհատական բնակելի տների, 2013 հասարակական և 596 արտադրական նշանակության օբյեկտների, 1255 միավոր /12111.01 հա/ հողերի, 13 այգետնակների և 103 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2012թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 41 վարձակալության գործարքների, այդ թվում 17 միավոր /2.88 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2012թ. առաջին կիսամյակի համեմատ նվազել է 75.0%-ով, իսկ 2011թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 37.9%-ով:

2012թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում վարձակալված 12111.01 հա հողերից 17.50 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 12093.50 հա հողերի 105.96 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 23.60 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 7199.96 հա, որից 7128.33 հա՝ գյուղատնտեսական նշանակության: 2012թ. երկրորդ կիսամյակում հանրապետության մարզերում վարձակալվել են 11924.39 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2012թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 12017 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.8%: 2012թ. երկրորդ կիսամյակում գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 18.5%-ով, իսկ 2011թ. երկրորդ համեմատ նվազել՝ 14.8%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /50.5%/, առանձնատների /24.7%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.4%/ և հողերի /7.9%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6305 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել է 17.3%-ով, իսկ 2011թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել՝ 0.5%-ով:

2012թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 969 գործարքներ, որից 633՝ Երևանում: Հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2012թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել է 79.8%-ով, ընդ որում Երևանում՝ 94.2%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 57.7%-ով: Հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2011թ. երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 24.1%-ով, ընդ որում Երևանում՝ 29.9%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 10.2%-ով:

2012թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրավադրվել են 1571.33 հա մակերեսով հողեր, որից 195.96 հա Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 79.3% կամ 1246.82 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 2.51 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 594.16 հա, որից 585.26 հա գյուղատնտեսական նշանակության:

2012թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում ապապետականացման միջոցով մասնավորեցման չեն արձանագրվել:

2012թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 13370 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2012թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել է 60.9%-ով, իսկ 2011թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել՝ 30.9%-ով: Առաջնային գրանցումների ընդհանուր քանակն անշարժ գույքի

նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.2%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /32.2%/:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե